զէս և աղերսագիրն, զոր առաքեալ էիք առ մեզ սակս ստորագրելոյ զայն, առաւել պարզ և բացայայտ կացուցանէր զենդիրն՝ քան զնամակն ձեր. զի 'ի կողմանս յայսոսիկ դժուարին եղեւ ունել դտանել զայնպիսի Հայազգի ոք, որ կարող լիցի ըստ օրինի թարգմանել զայն։ Մեք այժմ զայս պատասխանեմք՝ Ցորժամ հանդիպեցաք Սրբազնութեան ձերում, և բանիւ բերանոյ երկար և խորաքննին խորհրդով ճառ արկեալ խօսեցաք 'ի վերայ այսր խնդրոյ, այլ անկարելի եղեւ մեզ զելս հնարիւ դտանել, և վչտագնեալ սրտիւ մեկնեցաք 'ի միմեանց։ Եւ յետ այնորիկ առանձին խորհելով դարձեալ ոչ կարացաք դտանել զելս հնարիւ՝ 'ի բաց բառնալ զանկարգութիւնն զայն, զոր ոչ մեք և ոչ Սրբազնութիւն ձեր կամիք՝ մի միայն այն է դիւրին ճանապարհն՝ զոր յառաջադոյն ծանուցի ձեզ, եւ գրով պատուիրեցի Փոխանորդին մերոյ որ այդր՝ զնոյն բան վերստին յայտ առնել ձեզ, կարի յոյժ հաճոյ թուեցաւ խորհուրդս այս Սրբազնութեան ձեր և աւագամեծար ազգային իշխանաւորացդ, որոյ վասն յայտ արարիք մեզ զշնորհակալիս ձեր։ Զմի եւ զնոյն բան գրեալ ազդ արարի յերուսաղէմ Փոխանորդին մերոյ, զի ծանուցեն անդ Պատրիարքին և Փոխանորդին և համազգային երեւելեաց ձերոց, զի եթէ հաճոյ թուեսցի երկուց կողմանց վաւերացուսցեն զայն և տացեն մեզ տեղեկութիւն։ Իսկ նոքա կարի յոյժ պատշաճաւոր գտեալ զայս խորհուրդ՝ ընկալան, մեծի երախտեաց և գոհութեան արժանի համարելով՝ յայտ արարին մեզ։

Արդ՝ եթէ հաճոյ թուեցաւ առաջարկութիւնն մեր Սրբազնութեան ձերում և ամենեցուն՝ որք ընդ ձեզ են, զի՞ զդ հնար է վերստին փոխել զխորհուրդս մեր։ Այլ այժմ ոչ երկարելով զբանս և ոչ 'ի մէջ բերելով զամենայն խօսս, գրեմք ահաւասիկ առ Սրբազնութիւն ձեր, և ձեօք առ ամենայն պատուարժան աւագանիս. զի եթէ Տէր կամեսցի և եկեսցէ օր մեծի և Ս. Պասեքի՝ կատարեսցին Հանդէսք և արարողութիւնք Ս. Պասեքիս մերոյ, որպէս ասացեալ եմք, այսինքն յաւուր շաբաթու Ճրագալուցի կատարեսցուք մեք զհանդէս Լուսաւորութեան առանձին ընդ ուխտաւորս մեր միայն, ըստ արամադրու-